## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 42

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության" օրենքի 17-րդ հոդվածի և ղեկավարվելով Զովաբեր համայնքի ավագանու կանոնակարգի 2-րդ ենթակետի 2-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը՝ հետևյալ հարցերով.
   1) ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տալու մասին:
   2) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների և համայնքային սեփականություն համարվող գույքի օգտագործման դիմաց 2019թ. գանձվող վճարների դրույքաչափերի սահմանում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝** **ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 44

### ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԻՄԱՑ 2019ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 19 և 20կետերով, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Զովաբեր համայնքում խմելու ջրի մատակարարման ծառայությունը սահմանել անվճար և ազգաբնակչությունից 2019թ. ընթացքում վճար չգանձել:
2. Զովաբեր համայնքում <<Զովաբերի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ծառայությունները սահմանել անվճար և ազգաբնակչությունից 2019թ. ընթացքում ծնողական վճար չգանձել:
3. Համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի տան սպորտ դահլիճը 96մ$^{2}$ չափով, 2019թ. ընթացքում օգտագործման տրամադրել համայնքի պարի և թաեքվոնդոյի խմբերին՝ անվճար:
4. Զովաբեր համայնքում աղբահանության ամսական վճար սահմանել յուրաքանչյուր շնչի հաշվով 50 դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝** **ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբեր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Զովաբեր, (0261)61095, zovaber.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 43

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերով, 18-րդ հոդվածի 4-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Զովաբեր համայնքի ավագանու 09.01.2018թ. թիվ 1 նիստի թիվ 2-Ն որոշումը և հանձնաժողովի ուսումնասիրության ակտերը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի բյուջեի «Սոցիալական պաշտպանություն» բաժին 10, խումբ 09, դաս 01, ծրագիր 51, հոդված 4729-ից 280000 (Երկու հարյուր ութանասուն հազար) ՀՀ դրամ հատկացնել որպես սոցիալական օգնություն ներքոհիշյալ քաղաքացիներին.

| | |
|---|---|
| 1) Հակոբյան Շողիկ Նորիկի | – 50.0 հազ.դրամ |
| 2) Հովհաննիսյան Մաքսմիկ Բաբկենի | – 40.0 հազ.դրամ |
| 3) Ազիզյան Վարդան Արտավազդի | – 30.0 հազ.դրամ |
| 4) Կարապետյան Ռուզաննա Ժորիկի | – 25.0 հազ.դրամ |
| 5) Կարապետյան Սիլվա Իվանի | – 25.0 հազ.դրամ |
| 6) Հովհաննիսյան Հասմիկ Բադալի | – 25.0 հազ.դրամ |
| 7) Սուքիասյան Համեստ Սուրիկի | – 25.0 հազ.դրամ |
| 8) Հովհաննիսյան Արևիկ Ժորայի | – 20.0 հազ.դրամ |
| 9) Դալլաքյան Դոնարա Կամոյի | – 20.0 հազ.դրամ |
| 10) Նիկողոսյան Անժելա Գուրգենի | – 20.0 հազ.դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ

**Համայնքի ղեկավար՝ ՍԱՄՎԵԼ ԵՍԱՅԱՆ**